ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՀԱՆՁՆԵԼ ԴԵՈՆԹՈԼՈԳԻԱ ՄՈԴՈՒԼԻՑ

13.10.2014 08:37

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում 2014թ. հոկտեմբերի 10-ին տեղի է ունեցել ՀՀ փաստաբանական դպրոցի շրջանավարտների որակավորման քննությունները՝ դեոնթոլոգիա մոդուլից, որին մասնակցում էր 65 շրջանավարտ: Խնդիրները հաստատվել են քննությունից մեկ օր առաջ' գիշերը: Մոտ քսան խնդիրներից երկու շրջանավարտ թափանցիկ տարայից հանել են 4-ական խնդիր:

Շրջանավարտները լուծել են 4 խնդիր, որոնցից յուրաքանչյուրի համար նախատեսված է 5 առավելագույն միավոր (անցողիկ միավորը սահմանված է 12):

Պատահականության սկզբունքով ընտրվել են նաև շրջանավարտների սեղանները և նստարանները, ինչպես նաև նրանց ներկայությամբ սահմանվել են ծածկագրերը և շտրիխ կոդերը, որոնց բացահայտող էլեկտրոնային միակ տարբերակը կրիչի վրա է փոխանցվել, ջնջվել համակարգչից և տեղադրվել կապարակնքված արկղում:

Խնդիրները լուծելուց հետո ունկնդիրները գրավոր աշխատանքը տպել են երկու օրինակից, առաջինը հանձնել են հանձնաժողովին, իսկ երկրորդը ստորագրել և գցել են կապարակնքված արկղի մեջ: Հանձնաժողովին հանձնված օրինակի վրա ինքնակպչուն թղթով փակցվել է շտրիխ կոդը, որից հնարավոր չէր նույնացնել աշխատանքը հեղինակի հետ:

Քննության արդյունքները հրապարակելուց հետո բացվելու է արկղը և այդ պահից է Հանձնաժողովը տեղեկանալու, թե ով է գնահատականի հասցեատերը:

Ընդհանուր առմամբ փաստաբանի արտոնագիր ստանալու համար ունկնդիրները պետք է հաղթահարեն ևս երկու որակավորման քննություն. քաղաքացիական ուղղվածությամբ ունկնդիրները'պետք է կազմեն հայցադիմում և վճռի դեմ վերաքննիչ բողոք, իսկ քրեական ուղղվածությամբ ունկնդիրները՝ պետք է կազմեն միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք և դատավճռի դեմ վերաքննիչ բողոք:

Գնահատումը կատարվելու է որակավորման հանձնաժողովի սահմանած գնահատման չափանիշներով:


ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



59 60
51 52
49 50
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })